Հեղինակներ՝ Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան

ՃԱՆԱՉԵԼ ՈՒ ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ԱՊԱՏԵՂԵԿԱՏ ՎՈՒԹՅԱՆԸ

ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՏԴ 070:316.77(07)
ԳՄԴ 76.0+60.524.22g7
Վ 301

ՄԵԴԻԱ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Հեղինակներ.
Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան

Վ 301 Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը.դեպքերի քննարկում /
Գ. Վարդանյան, Օ. Սիմոնյան.- Եր.: Մեդիա նախաձեռնությունների կենտրոն ՀԿ, 2026.- 33 էջ:

Խմբագրական կազմ
Գեղամ Վարդանյան
Անի Եղիազարյան
Լուսինե Գրիգորյան
Հերիքնազ Հարությունյան
Նունե Սարգսյան

Ձևավորումը՝ Արթուր Զախարյանի
Որոշ պատկերների պատրաստման համար օգտագործվել
են արհեստական բանականության գործիքներ:

Գրքույկը մշակել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը: Այն «Մեդիագրագիտություն. հավելված» գրքույկների շարքի մաս է: Այս ուղեցույցը ներկայացնում է նմուշային 4 մոդուլ, ինչպես նաև լրացուցիչ նյութերի, մեդիագրագիտության ձեռնարկների հղումներ, որոնց օգնությամբ գրադարանները կարող են մշակել սեփական ծրագրերը համայնքի տարբեր խմբերի հետ աշխատելու համար:

Շարքում ներառված են հետյալ թեմատիկ գրքույկները.

Աստղիկ Բալայան
«Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում»

Լուսինե Գրիգորյան
«Մեդիագրագիտությունը գրադարանում»

Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան
«Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը.
դեպքերի քննարկում»

Տպագրված է «Ասողիկ» հրատարակչությունում:

ISBN 978-9939-1-2250-2 **© Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2026**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 Ներածություն

7 Կեղծված ու մոլորեցնող լուրեր՝ պատմության չափ հին

16 Գրավել լսարանը հուզական ազդեցության օգնությամբ

23 Արհեստական բանականության աճող ազդեցությունը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական մեդիայի աճող ազդեցության ժամանակաշրջանում արժեքավոր է կասկածելի տեղեկությունները նույնականացնելու հմտությունը: Կարևոր է կարողանալ տարբերակել ապատեղեկատվության բազմազան տեսակները, պարզել, թե երբ և ինչպիսի հնարքներ են կիրառված լսարանին մոլորեցնելու համար:

Փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող խմբագրություններն ամենօրյա ռեժիմով աշխատում են ապատեղեկատվական հոսքերին դիմակայելու համար: Սակայն նրանց օգնություն է հարկավոր: Թե՛ ֆորմալ կրթական համակարգում, թե՛ ոչ ֆորմալ դասընթացների ժամանակ տեղեկության աղբյուրների ստուգման հիմնական սկզբունքների դասավանդումը կարող է էականորեն բարձրացնել հասարակության դիմադրողականությունը և օգնել, որ մարդիկ կեղծված տեղեկատվական հոսքերի զոհեր չդառնան:

Այս ձեռնարկը ներկայացնում է ապատեղեկատվության տարբեր տեսակների տարածման դեպքերի նկարագրություն, պատմում է, թե ինչպես ու ինչ գործիքակազմի կիրառությամբ են լրագրողները ստուգել փաստերը: Ձեռնարկում ներառված են ապատեղեկատվության տարածման օրինակներ մարդկության պատմության

տարբեր ժամանակաշրջաններից, ինչը կօգնի քննարկել ու վերլուծել կեղծված լուրերի առաջացման ու տարածման պատճառներն ու մեխանիզմները: Այս ձեռնարկը նաև գործնական աշխատանքների առաջարկներ է ներկայացնում, որոնք մեդիագրագիտություն դասավանդողները կարող են ինտեգրել իրենց ծրագրերում:

1

ԿԵՂԾՎԱԾ ՈՒ ՄՈԼՈՐԵՑՆՈՂ ԼՈՒՐԵՐ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՀԻՆ



Վերջին տասը տարիներին «կեղծ լուր» տերմինն աշխարհում այնքան է տարածվել, որ 2017-ին այն ընդգրկվել է Քոլինզի բառարանում (https://tinyurl.com/8ppef7te):

Ապատեղեկատվական հոսքերի քանակի աճը համընկնում է սոցիալական ցանցերի տարածվածության ու ազդեցության աճի հետ: Սակայն հորինված ու չափազանցված լուրերով մարդկանց մոլորեցնելու դեպքերը նույնքան հին են, որքան մարդկության պատմությունը:

Տարբեր դարերում ու պետություններում բազմաթիվ են չհաստատված, համատեքստից կտրված ու քարոզչական բովանդակությամբ լուրերի տարածման պատմությունները:

Կյանքը լուսնի վրա՝ աստղադիտակի միջոցով

1835թ. օգոստոսի 25-ին «Նյու Յորք Սան» (The New York Sun) թերթը սկսեց հրապարակել վեց հոդվածներից կազմված հոդվածաշար, որտեղ պատմվում էր, թե իբր լուսնի վրա կյանք է հայտնաբերվել:

Հոդվածաշարը հայտնի դարձավ որպես «Լուսնի մեծ խաբեություն»: Ներկայացվում էր, թե իբր հոդվածները վերատպություններ են «Էդինբուրգի Գիտական Ամսագրից» (Edinburgh Journal of Science):

Հեղինակ էր նշված բժիշկ Էնդրյու Գրանթը, որը ներկայացվում էր որպես այն ժամանակ հայտնի աստղագետ սըր Ջոն Հերշելի գործընկեր: Հերշելը իսկապես 1834թ. հունվարին մեկնել էր Քեյփթաուն՝ նոր, հզոր հեռադիտակով աստղադիտարան հիմնելու: Գրանթի պատմելով՝ Հերշելը իբր գտել էր լուսնի վրա կյանքի ձևեր՝ այդ թվում միաեղջյուրներ, երկոտանի բևեռային կուղբեր և մազոտ թևավոր մարդանման արարածներ՝ նման չղջիկների: Հոդվածներում նկարագրվում էր նաև լուսնի աշխարհագրությունը՝ հրսկայական խառնարաններով, ամետիստի հսկա բյուրեղներով, արագահոս գետերով ու խիտ բուսականությամբ:

Լուսանկարը՝ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանից
(https://tinyurl.com/y5a54e6y)

«Նյու Յորք Սան»-ը լայն լսարանի համար նախատեսված էժանագին թերթ էր: Լուսնի մասին հոդվածների հրապարակումից հետո թերթի վաճառքը կտրուկ աճեց. մարդիկ հաճույքով կարդում էին այդ պատմությունները: Սակայն հոդվածաշարն ամբողջովին կեղծ էր: «Էդինբուրգի Գիտական Ամսագիրը» դադարել էր տպագրվել հոդվածների հրապարակումից տարիներ առաջ, իսկ Գրանթն իրականում գոյություն չուներ: Կա վարկած, որ հոդվածները գրել էր «Նյու Յորք Սանի» լրագրող Ռիչարդ Ադամս Լոքը, որը կրթություն էր ստացել Քեմբրիջի համալսարանում՝ ծաղրելու համար այն գիտական պնդումները, թե իբր Երկիր մոլորակից դուրս կյանք գոյություն ունի: Այն ժամանակ, օրինակ կային պնդումներ, թե միայն լուսնի վրա ապրում է 4.2 միլիարդ մարդ:

Թերթի ընթերցողները հավատացել էին երգիծական պատումին:

1835թ. սեպտեմբերի 16-ին «Նյու Յորք Սանն» ընդունեց, որ հոդվածները խաբեություն էին: Սակայն նույնիսկ դրանից հետո թերթի վաճառքի ծավալները չնվազեցին:

Ցանկացողները հիմա էլ կարող են ընթերցել հոդվածաշարը hoaxes.org կայքում:
(https://tinyurl.com/294j9mnn)

Բ Մարսելի Մեծ ժանտախտը

1720-ից սկսած մի քանի տարիների ընթացքում ֆրանսիական Մարսել քաղաքը ժանտախտի ճիրաններում էր: Վարակը սրվել էր իշխանությունների ստերի պատճառով: Սա այն դեպքերից է, երբ ակնառու երևում է, թե որքան մեծ վնաս կարող է հասցնել ապատեղեկատվությունը մարդկանց՝ նույնիսկ մինչև սոցիալական ցանցերով հաղորդակցության ու գլոբալիզացիայի դարաշրջանը:

Համաճարակը սկսվել էր 1720թ. մայիսի 25-ին: Այն քաղաք էր եկել «Գրան Սենտ-Անտուան» անունով մի նավի հետ: Մինչև Մարսելի նավահանգիստ ժամանելը նավը մեկ տարի շրջագայել էր Միջերկրական ծովով մեկ և եղել էր Կիպրոսում, որտեղ տիրում էր ժանտախտը: Ժանտախտը, որը սովորաբար տարածվում է վարակված լվերի և դրանք կրող կրծողների միջոցով փոխանցվել էր նավ:

Նավարկության ընթացքում «Գրան Սենտ-Անտուան» մի քանի նավաստի մահացել էին՝ ունենալով ժանտախտին բնորոշ նշաններ: Հնարավոր է այն պատճառով, որ 18-րդ դարում հիվանդությունից մահերը սովորական էին՝ նավաստիները ցամաք իջնելիս հնարավոր ժանտախտի մասին ոչ ոքի չէին հայտնել: Նավահանգստի տեսուչները կաշառքի դիմաց թույլ էին տվել, որ վարակված բեռի մի մասը առանց զննման իջեցվի ցամաք: Ժանտախտը սկսել էր տարածվել Մարսելում:

Քաղաքում վարակների և մահերի թիվն աճում էր: Մարսելի բնակիչները խուճապի էին մատնվել: Սակայն քաղաքային իշխանությունները որոշել էին քաղաքի տնտեսությունը գերադասել մարդկային կյանքից ու որոշել էին կանխել ժանտախտի պատճառով նավահանգիստը փակելու վտանգը:

Նրանք վարակը զսպելու փոխարեն, ապատեղեկատվության արշավ էին ձեռնարկել:

Իշխանությունները գումար էին վճարում բժիշկներին, որպեսզի հիվանդությունն ախտորոշեն ոչ թե որպես «ժանտախտ», այլ՝ «չարորակ տենդ», ու այդպիսով կեղծում էին պաշտոնական վիճակագրությունը: Նրանք ազդում էին հանրային տրամադրությունների վրա՝ փորձելով ժխտել վարակի գոյությունը՝ օգտագործելով նաև տպագիր մամուլը:

Սակայն մահացածների թիվն աճում էր: Խուճապահար մարսելցիները փորձում էին փախչել քաղաքից: Ի վերջո քաղաքում կարանտին սահմանվեց, սակայն արդեն ուշ էր: Ժանտախտը տարածվեց գյուղական վայրեր: Տարբեր գնահատականներով՝ ժանտախտն այդ ընթացքում խլել էր մոտ 100,000 մարդու կյանք:

Առաջադրանքներ այս բաժնի համար

1 Դիտեք Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Ստուգված է» հաղորդաշարի թողարկման սյուժեն, որտեղ պատմվում է, թե ինչպես է 1938թ.-ին Նյու Յորքի «Մերկուրի» թատրոնից հեռարձակվող «Աշխարհների պատերազմը» ռադիոբեմադրությունը ունկնդիրներին շփոթության մեջ գցել ու իրական խուճապ տարածել: (https://tinyurl.com/6ahpnrb6) Այս դեպքի մասին անգլերենով լրացուցիչ նյութեր կարելի է կարդալ (https://tinyurl.com/43usx4d4); (https://tinyurl.com/bdeftt8) հղումներով: Բեմադրության ձայնագրությունը հասանելի է Յություբում (https://tinyurl.com/4x2wcdc6):

2 Կարդացեք Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Մեդիա ուգիտություն» ուսումնական ձեռնարկի (https://tinyurl.com/427scxwz) «Ինչպես դիմագրավել ապատեղեկատվությանը» թեմայի «Կեղծ լուր և ապատեղեկատվություն» բաժինը (էջ 83): Այնտեղ նկարագրվում են մոլորեցնող լուրերի ու քարոզչության նպատակով սուտ լուրերի տարածման դեպքեր:

Տարբեր դասերին ձեր լսարանին ներկայացրեք այս դեպքերը: Քննարկման համար հնարավոր հարցերը կարող են լինել՝

Ա. Ինչպիսի՞ն էր աշխարհը 1938-ին ու ինչպիսին է այն հիմա: Ի՞նչ տարբերություններ կան այն ժամանակվա ու ներկա ժամանակներում տեղեկությունների տարածման ձևերի ու տեխնոլոգիաների միջև:

Բ. Ի՞նչ կառաջարկեք դուք պատերազմի կամ քաղաքական հակամարտությունների ժամանակ քարոզչական նպատակով հորինված լուրեր տարածելուն դիմագրավելու համար:

Գ. Հիմա, սոցիալական մեդիայի համատարած օգտագործման ժամանակաշրջանում հնարավոր համարո՞ւմ եք նմանատիպ դեպքի կրկնություն: Հիմնավորեք ձեր կարծիքը:

3 Ձեր լսարանը բաժանեք երկու խմբի: Առաջին խումբը պետք է քննարկի ու ներկայացնի, թե 1835թ.-ին, երբ տարածվել է «Լուսնի մեծ խաբեությունը», ինչ կարող էին անել փաստեր ստուգող լրագրողները հեռադիտակով լուսնի վրա կյանքին հետևելու մասին հոդվածը ստուգելու համար: Երկրորդ խումբը պետք է քննարկի ու ներկայացնի, թե ժամանակակից ինչ գործիքակազմ կա «Լուսնի մեծ խաբեության» թեմայով իրական փաստեր հավաքելու համար:

4 Մարսելում ժանտախտի տարածման ժամանակ ապատեղեկատվական արշավը համեմատեք Քովիդ-19 համավարակի օրերին տարածվող դավադրության տեսությունների ու սուտ լուրերի ալիքների հետ: Պատասխանեք հետևյալ հարցերին՝

Ա. Որո՞նք են այս երկու իրադարձությունների նմանությունները:

Բ. Որո՞նք են այս երկու իրադարձությունների տարբերությունները:

Գ. Ինչո՞ւ է համավարակներ ու համաճարակների ժամանակ աճում չընստուգված տեղեկությունների, ապատեղեկատվության տարբեր տեսակների քանակը:

2

ԳՐԱՎԵԼ ԼՍԱՐԱՆԸ ՀՈՒՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

4-օրյա աշխատանքային շաբաթ Ֆինլանդիայում

Դեռ 2019թ.-ից պարբերաբար լուրեր են տարածվում, թե Ֆինլանդիան անցնում է 4-օրյա աշխատանքային շաբաթվա: Միջազգային մեդիայում գրում էին, թե Ֆինլանդիայի այն ժամանակ նորընտիր վարչապետ Սաննա Մարինը առաջարկել է անցնել 4-օրյա աշխատանքային շաբաթվա, իսկ աշխատանքային օրը դարձնել 6-ժամյա:

Սաննա Մարինը, երբ դեռ Ֆինլանդիայի վարչապետ չէր, մի պանելային քննարկման ժամանակ իսկապես խոսել էր 4-օրյա աշխատանքային շաբաթվա մասին, բայց դա չէր եղել պաշտոնական հայտարարություն: Աշխատանքային օրերն ու ժամերը կրճատելու մասին որևէ ծրագիր Ֆինլանդիայի կառավարությունը չէր ներկայացրել ու դեռ չի ներկայացրել: Այս մասին Ֆինլանդիայի նախարարությունը նունիսկ ստիպված եղավ հատուկ պարզաբանում ներկայացնել: (https://tinyurl.com/34mwk6ua) «Ֆինլանդիայի կառավարության ծրագրում 4-օրյա աշխատանքային շաբաթվա մասին հիշատակում չկա: Խնդիրը ֆիննական կառավարության օրակարգում չէ»,- գրված էր հաղորդագրության մեջ:

4-օրյա աշխատանքային շաբաթվա մասին լուրի տարածմանը անուղղակիորեն նպաստեց բրիտանական հեղանակավոր «Գարդիանը» (The Guardian) (https://tinyurl.com/3cdkaxzn), որը գրել էր, թե 4-օրյա աշխատանքային շաբաթը Ֆինլանդիայի կառավարության քաղաքականության մաս է: Հետագայում Գարդիանն ուղղեց ինքն իրեն, սակայն մինչև հիմա էլ հանրային քննարկումների ժամանակ ու սոցիալական ցանցերում ընդունված անհիմն կարծիք կա, թե Ֆինլանդիայում մարդիկ ավելի քիչ են աշխատում, քան այլ երկրներում:

Սա այն դեպքերից է, երբ լուրը հուզական տեսակետից ազդեցիկ է: Ավելի կարճ աշխատանքային ժամերի մասին լուրը գրավիչ է մարդկանց համար: Նրանք շտապում են սոցիալական ցանցերում կիսվել այդ նորությամբ, գուցեև ազդել իրենց երկրներում որոշում կայացնողների վրա՝ աշխատաժամերի վերաբերյալ օրենսդրությունը վերանայելու համար:

Սա այն դեպքերից է, երբ լրագրողները կարող էին ստուգել սկզբնաղբյուրը, սակայն շտապել էին՝ գերադասելով ազդեցիկ վերնագրով հոդված հրապարակել: Նման դեպքերը հայտնի են, որպես ապատեղեկատվության յուրահատուկ տեսակ, երբ լուրի հեղինակը մոլորեցնելու նպատակ չունի ու ապատեղեկատվությունը լրագրողական սխալի հետևանք է:

Ապատեղեկատվության տեսակների մասին ավելի մանրամասն կարելի է կարդալ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Մեդիա iգիտություն» ուսումնական ձեռնարկի «Ինչպես դիմագրավել ապատեղեկատվությանը» բաժնում:
(https://tinyurl.com/yyj6smvy)

Բ Հռոմի նոր պապի հայկական արմատները

2025թ.-ի մայիսի 8-ին ամերիկացի կարդինալ Ռոբերտ Պրևոստն ընտրվեց Հռոմի Պապ՝ ընդունելով Լևոն 14-րդ անունը: Դրան հաջորդող շաբաթվա ընթացքում հայկական լրատվամիջոցներում սկսեցին լուրեր շրջանառվել, թե Հռոմի նոր պապն ազգությամբ հայ է:

Լուրերի աղբյուրը գործարար Նուրհան Չեթինկայանն էր: Նա թուրքական denizpostasi կայքի պատրաստած նյութում ասում էր, թե իբր Ֆրենսիս Պրևոստի հայրանունը Փարուկ Պարսեհյան է:

«Իր պապերը Կայսերիից են գաղթել Ամերիկա, որտեղ էլ, որ կրոնական կրթություն է ստացել և գնացել է Վատիկան, և հիմա էլ Պապ է դարձել՝ մորս քեռու կողմից իմ ազգականն է», - պնդել էր Չեթինկայանը:

Այս լուրը վերահրապարակել էին հայաստանյան «Կենտրոն» հեռուստաընկերությունը, «Ազգ» օրաթերթը:

«Սվիլինեթ»-ի փաստերի ստուգման թիմն ուսումնասիրել էր (https://tinyurl.com/y4csfpd9) Լևոն 14-րդ Պապի կենսագրությունը, պաշտոնական փաստաթղթերը ու պարզել, որ նա հայկական արմատներ չունի: Լրագրողներն ուսումնասիրել էին Family Search https://tinyurl.com/2w6y7ff7 հարթակը, որտեղ մարդիկ կարող են գտնել իրենց նախնիներին՝ գրելով անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվն ու այլ տվյալներ: Հարթակի տվյալներով Լևոն 14-րդը հայկական արմատներ չունի: «Նրա հայրական կողմից պապը ծնվել է Իտալիայիում՝ 1876-ին, իսկ տատը՝ Ֆրանսիայում՝ 1894-ին: Նրանց նախնիներն էլ նույն երկրներից են»:

Սա ևս մեկ դեպք է, երբ հուզական բովանդակությունը լայնորեն տարածվում է: Հռոմի նոր պապի հայկական ծագումը հպարտանալու առիթ է և մարդիկ այդ տեղեկությունը տարածում են սոցիալական ցանցերում: Ընդ որում երևույթն ազգություն չի ճանաչում: Սիվիլնեթը պարզել էր, որ վրացական լրատվամիջոցներում էլ լուրեր էին տարածվել այն մասին, թե Լևոն 14-րդը վրացի է:

Առաջադրանքներ այս բաժնի համար

1 Ընթերցեք Media.am-ի «Հունվարի 1-15-ը կեղծ ու հերքված լուրերը» (https://tinyurl.com/37a4h6nn) հոդվածը: Ուսումնասիրեք, թե այնտեղ բացի 4-օրյա աշխատանքային շաբաթի մասին պատմությունից ուրիշ ինչ մանիպուլյատիվ լուրերի մասին է պատմվում: Կազմակերպեք քննարկում պարզելու համար, թե հոդվածում նկարագված դեպքերում ապատեղեկատվության ինչ հնարքներ է կիրառված ու ինչ նպատակներով: Նույն առաջադրանքի համար կարելի է օգտագործել նաև Փաստերի ստուգման հարթակի «Անցնող շաբաթվա կեղծ և մանիպուլյատիվ լուրերը» հոդվածը: (https://fip.am/17015)

2 Ընթերցեք Սիվիլնեթի «Հռոմի նոր Պապը հայ չէ. ինչու չեն հաստատվում հայկական արմատների մասին պնդումները» հոդվածը (https://tinyurl.com/y4csfpd9): Քննարկեք, թե լրագրողը ինչ աղբյուրներ է օգտագործել իր հոդվածում:

Այս վարժությունների համար կարելի է օգտագործել Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Կասկածիր, համեմատիր, ճշտիր. ինչպես բացահայտել և ստուգել կեղծ տեղեկությունները» ձեռնարկը: (https://tinyurl.com/yb3t6y8r)

3 Լսարանին տվեք երեք չեզոք լուր.

Ա. Հայտնաբերվել է կենդանու նոր տեսակ:

Բ. Քաղաքական գործիչը հայտարարություն է տարածել:

Գ. Գիտնականների խումբը հետազոտության համար պետական բյուջեից գումար է ստացել:

Բաժանեք լսարանը խմբերի ու հանձնարարեք այս վերնագրերի հիման վրա գրել լուրեր, որոնք հուզական ազդեցություն ունենան լսարանի վրա: Օրինակ կարելի է սկսել այս նախադասություններով ու շարունակել.

Ա. Գիտնականները զգուշացնում են, որ նոր կենդանատեսակը կարող է վտանգավոր լինել մարդկության համար... (վախ):

Բ. Իշխանությունները խուսափել են պատասխանել գրիպի նոր տեսակի վերաբերյալ լրագրողների հարցերին... (զայրույթ)

Գ. Գիտնականների նոր հայտնագործությունը թույլ կտա գտնել անբուժելի հիվանդությունները հաղթահարելու ճանապարհը... (հույս):

Վերջում խմբերին հանձնարարեք համեմատել, թե որքանով են լսարանում հորինված լուրերը ազդեցիկ, լուրերից ո՞րն ավելի շատ կտարածվի ու հավանությունների կարժանանա սոցիալական ցանցերում:

3

ԱՌՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՃՈՂ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2023թ.-ին գերմանացի լուսանկարիչ Բորիս Էլդագսենի ներկայացրած պատկերը հաղթեց «Սոնի» (SONY) ընկերության լուսանկարչական մրցույթում: Սակայն հաղթանակից հետո լուսանկարիչը խոստովանեց, որ ներկայացրել էր արհեստական բանականությամբ (ԱԲ) գեներացված պատկեր և ժյուրին այն ընդունել էր, որպես իրական աշխատանք:



Բորիս Էլդագսենի կողմից՝ ԱԲ կիրառությամբ գեներացված պատկերը:
Լուսանկարը՝
Բորիս Էլգադսենի կայքից
(https://tinyurl.com/yx344rf5)

Էլդագսենը չընդունեց մրցանակը և ասաց, թե ինքը ցանկացել էր ստուգել, թե արդյո՞ք լուսանկարչության աշխարհը պատրաստ է ԱԲ-ի մարտահրավերներին: (https://tinyurl.com/3f59uxu)

Այս դեպքից երկու տարի է անցել ու ԱԲ-ի օգնությամբ ստեղծված պատկերների և տեսանյութերի որակը շարունակում է կատարելագործվել: Դրանք ավելի ու ավելի իրականին մոտ են դառնում ու իսկական մարտահրավեր են հասարակությունների համար:

Փաստեր ստուգող լրագրողների համար արհեստական գեներացված բանականության կիրառությամբ պատկերները նոր խնդիրներ են ստեղծում, որոնք հաղթահարելու համար հսկայական աշխատանք է պահանջվում: Ահա մի քանի այդպիսի հայտնի դեպք:

Ա Եվրոպացի առաջնորդները՝ Թրամփին սպասելիս

2025թ.-ի օգոստոսին սոցիալական ցանցերում տարածվեց պատկեր, որտեղ եվրոպական տարբեր երկրների ղեկավարներ, որոնց թվում նաև Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը և Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը, իբրև թե Վաշինգթոնի Սպիտակ տան միջանցքում սպասում են ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի հետ հանդիպմանը:

Media.am-ը պարզել էր, որ պատկերը կեղծ է և ստեղծվել է արհեստական բանականության կիրառմամբ:

Պատկերն ուներ ԱԲ-ի կիրառության դեպքերի համար բնորոշ խափանումներ և անհամապատասխանություններ. մարդկանց ձեռքերի մատներն ունեն դեֆորմացված տեսք, Մակրոնի և Ֆոն դեր Լայենի միջև կա լրացուցիչ ոտք: Արհեստական բանականության հայտնաբերման գործիքները ևս նկարը համարում են արհեստական բանականությամբ գեներացած:







Բ Արևի խավարման լուսանկարը

Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանը 2024թ.-ի ապրիլին Ֆեյսբուքում տարածել էր արևի խավարման պատկեր ու նշել, թե այն իրական է: Նրա գրառումը վերահրապարակել էին բազմաթիվ լրատվամիջոցներ: Պատկերն իրոք տպավորիչ էր, սակայն Սիվիլնեթը պարզել էր, որ այն գեներացված է արհեստական բանականությամբ (https://tinyurl.com/33t5m9jp):

ՍիվիլՆեթը փաստերի ստուգում իրականացնելու համար արհեստական բանականության կիրառությունը հայտնաբերելու մի քանի գործիք էր օգտագործել: Լրագրողները նաև նկատել էին, որ «արևը պատկերում չափից դուրս խոշոր է և հորիզոնին մոտ, այնինչ արեգակի ամբողջական խավարումը կարելի է տեսնել միայն կեսօրին, երբ արևը զենիթում է և գտնվում է դիտորդի գլխավերևում»:

ԱԲ-ով գեներացված պատկերները ստուգելու հարցում լրագրողները խորհուրդ են տալիս

Ա. Որոնել ու գտնել պատկերի սկզնաղբյուրը՝ հնարավորիս բարձր որակով:

Բ. Ուշադիր զննել պատկերը՝ անհարթություններ հայտնաբերելու համար: Դրանք կարող են լինել մարդկանց մարմնի տարբեր մասերի անհարթություններ, մարմնի անհամաչափություն և այլն:

Գ. Օգտվել ԱԲ կիրառությունը հայտնաբերելու գործիքներից: Օրինակ, IsItAI (https://isitai.com) կամ AIorNot (https://www.aiornot.com) :

Դ. Հիշել, որ ԱԲ կիրառությունը հայտնաբորող գործիքը ևս կարող է սխալվել ու միայն այդ գործիքի վճռի հիման վրա չարժե վերջնական եզրակացություն ունենալ:

1 Դիմանկարներ գեներացնելու համար օգտագործեք արհեստական բանականությամբ գեներացված դիմանկարների ստեղծման «Այս անձը գոյություն չունի» գործիքներից մեկը (https://thisperson-doesnotexist.com); (https://this-person-does-not-exist.com):

Ա. Բաժանվեք խմբերի և ուսումնասիրեք գեներացված լուսանկարները՝ քննարկելու համար, թե ինչ անհամապատասխանություններ կան պատկերներում:

Բ. ԱԲ գործիքներով գեներացված լուսանկարները ստուգեք ԱԲ կիրառությունը հայտնաբերող գործիքներով (https://isitai.com) կամ (https://www.aior-not.com) և համեմատեք արդյունքները:

2 Դիտեք և քննարկեք Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Ստուգված է» հաղորդաշարի «Արհեստական բանականությունն ու փաստերի ստուգումը» թողարկումը (https://tinyurl.com/3z4j4ajb):

3 Լսարանի հետ պարզեք, թե ԱԲ-ն որքան արագ կարող է կեղծված բովանդակություն տարածել: Հանձնարարեք գծել ժամանակացույց, թե օրինակ «Աշտարակի ձորում պեղումները հին հռոմեական քաղաք են հայտնաբերել» վերնագրով հորինված լուրն ինչպես կտարածվի ԱԲ-ի կիրառությամբ:

- ԱԲ-ով ստեղծվում է պատկեր:
- ԱԲ-ն գրում է «վիրուսային» վերնագիր:
- ԱԲ-ն լուրը ավտոմատացված «բոտերի» կիրառությամբ վերահրապարակում է սոցիալական ցանցերում:
- Սոցիալական մեդիայում ԱԲ-ով գեներացված լուրը տարածում են իրական մարդիկ՝ ներառյալ մեծ լսարան ունեցողները:
- Սոցիալական ցանցերում քննարկումներ են հայտնվում այն մասին, որ լուրը գեներացված է ԱԲ-ով:
- Փաստեր ստուգող լրագրողները այդ թեմայով հոդվածներ են հրապարակում:
- Այս թեմայով ապատեղեկատվությունը, միևնույնն է շարունակում է ապրել սոցիալական ցանցերում:

Նաև քննարկեք, թե եթե ԱԲ-ն որքանով է նպաստել կեղծված ու հորինված լուրերի տարածմանը:

Օգտակար ռեսուրսներ այս Ձեռնարկով դասավանդողների համար

- «Մեդիա ուգիտություն» ուսումնական ձեռնարկ (https://tinyurl.com/yyj6smvy)

- Մեդիագրագիտության առցանց դասընթաց (https://tinyurl.com/427scxwz)

- «5 մատի պես ճանաչել մեդիան». ձեռնարկ մեդիագրագիտություն դասավանդողների համար (https://tinyurl.com/yc7y2j5a)

- Մեդիագրագիտությունը հակամարտությունների ժամանակ. ձեռնարկ դասավանդողների համար (https://tinyurl.com/3u49tr7d)

- Ապատեղեկատվության տարածումը Տիկտոկի հայալեզու տիրույթում (https://tinyurl.com/3a6crs78)

- Փաստերի ստուգման ռադար (https://tinyurl.com/yz5eh2zr)

- ԱԲ-ով ստեղծված բովանդակության հայտնաբերում. ձեռնարկ լրագրողների համար (https://tinyurl.com/4uf696fk)

- «Ստուգված է». Media.am-ի փաստերի ստուգման լրագրության թիմ (https://media.am/hy/category/verified)

- «ՍիվիլՆեթՉեք». Սիվիլնեթի փաստերի ստուգման լրագրության թիմ (https://www.civilnet.am/civilnetcheck)

- Փաստերի ստուգման հարթակ (https://fip.am)

- «Փաստացի»՝ Հայաստանում փաստերի ստուգման լրագրության խմբագրությունների համագործակցության ցանցի Ֆեյսբուքի խումբ (https://www.facebook.com/groups/pastatsi)

- Snopes. Անգլերենով փաստերի ստուգման լրագրության բովանդակության համար (https://www.snopes.com)

- Проверено. Ռուսերենով փաստերի ստուգման լրագրության բովանդակության համար (https://provereno.media)

Աստղիկ Բալայան

Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում

Լուսինե Գրիգորյան

Մեդիագրագիտությունը գրադարանում

Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան

Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը. դեպքերի քննարկում

ISBN 978-9939-1-2250-2
9 789939 122502